

ՆՇԱՐՆԵՐ ՀՀ ԱԳՁԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՆԱԽՕՐԷԻՆ

Posted on May 10, 2021 by Keghart



Category: [Opinions](#)



Keghart.org, 11 Մայիս 2021

Յետ պատերազմեան քաղաքական, տնտեսական եւ ընկերային կեանքի քաոսային ու մշուշապատ պայմաններու տակ Հայաստանի Հանրապետութեան (ՀՀ) ժողովուրդը կը պատրաստուի Ազգային ժողովի (ԱԺ, խորհրդարան) արտահերթ ընտրություններուն: Բորբոքած են կիրքերը, նախկին երեք նախագահներու միջեւ նախաձեռնուած հանդիպումները որեւէ դրական արդիւնքի չհասան՝ հակառակ Ա. Նախագահ Լեւոն Տեր-Պետրոսեանի ջանքերուն, որպէսզի միասնական դաշինքով մը հրապարակ իջնեն: Ան յայտարարեց թէ ինք չի ցանկար վարչապետութեան ձգտիլ, բայց կը փորձէ համոզել ժողովուրդը որ ընտրէ աւելի ատակ եւ աւելի յստակ քաղաքական տեսլական ունեցող անձ մը: Անկէ ետք ձեւաւորուեցաւ Քոչարեան - ՀՅԴ - Վերածնունդ Հայաստան «սրբազան դաշինք»ը: Ի դէպ նշենք, որ ՀՅԴ-ի վերնախաւը կրկին անգամ իր ճակատագիրը վստահած է ժողովուրդին մեծամասնութեան կողմէ ոճրագործ պիտակուած Քոչարեանին, հարազատ մնալով իր կուսակցական ռազմավարութեան՝ որեւէ գնով հասնիլ պետական պաշտօններու: Մինչեւ օրս կը շարունակուին կազմաւորուիլ նոր դաշինքներ, անջատումներ, միասնական արշաւներ: Նախընտարական քարոզարշաւին մէջ յարատեւօրէն կը լսուին փոխադարձ անարգանքներ, անհանդուրժողականութեան պոռթկումներ: Հայաստանի քաղաքական դաշտը կրկին հրաբուխի վրայ է:

Եւ այս բոլորի վրայ Ռուսաստանի Դաշնութեան (ՌԴ) արտաքին գործերու նախարար Սերկէյ Լավրովը կը յայտնուի Երեւանի մէջ: Մարդիկ ինքնաբերաբար հարց կու տան՝ ի՞նչ ընելու համար: Կը շրջին զանազան կարծիքներ, գուշակություններ եւ կանխատեսումներ: Ոմանց կարծիքով պատահականօրէն ընտրուած չէր այցելութեան թուականը: Ուրիշներ կը պնդեն թէ իր այցելութեան գլխաւոր օրակարգն էր ՀՀ քաղաքական դաշտը համոզել որ ընտրությունները աւարտին Կրեմլինի՝ տարածաշրջանին մէջ նկրտումներուն լաւագոյնս սպասարկելու ունակ թեկնածուի ընտրութեամբ, երբ NATO-ն, ըստ երեւոյթին կը պատրաստուի ընդարձակելու գործողություններու դաշտը: Ուրեմն, ըստ անոնց, լաւագոյն թեկնածուն «Մոսկուայի իրենց մարդն է»՝ Ռոբերտ Քոչարեանը: Ուրիշներ ալ կը պնդեն՝ իբր թէ հրաժարեալ վարչապետն ալ վատ թեկնածու մը չէ, որովհետեւ անոր անձին մէջ կը տեսնեն թոյլ, յեղեղուկ եւ աթոռատենչիկ փառամուլ մը:

Չենք կրնար արհամարհել այն փաստը, որ հակառակ Նիկոլ Փաշինեանի ժողովրդական թիկունքի զգալի անկումին՝ ան տակաւին կը վայելէ հաւանական քուէարկողներու 35-40 առ հարիւրին նեցուկը, առաւել՝ քարոզարշաւին անհրաժեշտ պետական եւ կարգ մը օլիգարխներու նիւթական ու զանգուածային լրատուութեանց կարեւոր աղբիւրներն ու լծակները: «Հրաժարեալ» վարչապետը կը վայելէ պահու թելադրանքէն ծնած առաւելություն մը՝ հազարաւորներ իրենց ծայները կրնան տալ իրեն՝ պարզապէս որպէսզի «նախկիններէն» ոչ ոք վերադառնայ իշխանութեան:

Հարց կը ծագի՝ յառաջիկային կայանալիք ընտրութիւնները որքանով պիտի ըլլան թափանցիկ, կամաւոր ընտրութեամբ, անաչառութեամբ եւ պետական միջամտութենէ հեռու (ընտրակեղծիք եւ այլն): Ներկայ պիտի ըլլա՞ն օտար դիտորդներ եւ անոնք ազատութիւնը պիտի ունենա՞ն հետեւելու ընտրութեան ընթացքին եւ ապա արտայայտելու իրենց դիտարկումներուն առարկայական եւ անաչառ տեղեկագիրը:

Այս ընտրութիւնները նոյնպէս պիտի առաջնորդուին ընտրական օրէնքի տրամադրութիւններով ու կանոններով, որոնք կը յատկանշուին սահմանափակումներով: Կը նշանակէ թէ կարգ մը անկախ թեկնածուներ առիթ պիտի չունենան յառաջադրուելու, եթէ այս կամ այն կուսակցութեան կողմէ առաջ չեն քաշուիր. ուրեմն կը գտնուինք անբնական եւ ոչ-դեմոկրատական կացութեան մը դէմ հանդիման: Տակաւին կայ նաեւ այլ կաշկանդում մը՝ երկքաղաքացի թեկնածուներու պարագան:



Նիկոլ Փաշինեան, Ռոբերտ Զոչարեան, Վահէ Գասպարեան

Հետաքրքրական է բաւական ժողովրդականութիւն վայելել սկսող «Ազգային ժողովրդավարական բեւեռ»ի պարագան (ԱԺԲ): Վերջիններս յառաջադրեցին իրենց թեկնածուն՝ բժիշկ Վահէ Գասպարեանը, որուն անձին վրայ ոչ մէկ բիծ տակաւին գտնուած է եւ ակելին՝ ան ամբողջ պատերազմի ընթացքին ռումբերու եւ արկերու պայթիւններու տակ զինուորի կեանքեր կը փրկէր՝ թիկունքին հրացան եւ ձեռքերուն մէջ բժշկական նշտրակ ու դեղօրայք: Հայաստանեան մամուլին եւ քարոզարշաւին մէջ սակայն առատօրէն կը շրջին այնպիսի տեղեկութիւններ ու ապատեղեկութիւններ, ըստ որոնց, ԱԺԲ-ն կը ներկայացուի կամ կը պիտակաւորուի որպէս «հակառուս», արեւմտամետ, հետեւաբար խիստ անցանկալի ՌԴ-ի համար:

Բնականաբար կը ծագին կարգ մը վաւերական հարցումներ՝ եթէ Ռ. Զոչարեանի առաջնորդած ցանկի թեկնածուները քիչ հաւանականութիւն ունին ընտրուելու, ուրեմն ինքնաբերաբար այսօրուան «Իմ քայլականներ»ը պիտի վերադառնան, իսկ եթէ վերջիններս չկարողանան ընտրել նուազագոյն թիւով պատգամաւորներ յաջորդ վարչապետը որոշելու ... կրկի՞ն նոր դատարկութիւն մը, քաո՞ս մը գուցէ...:

Ընտրագանգուածի քանի՞ տոկոսը պիտի ուզէ մասնակցիլ: Կարելի չէ արհամարհել

չկողմնորոշուածներու կամ տատանուողներու թիւը, որոնց մէջ շատ շատեր ուշի ուշով կը հետեւին թէ մինչեւ վերջին օրերը ո՞ր թեկնածուն կրնայ շահիլ եւ ցուցադրաբար անոր քուէարկել ...ապագայի ակնկալիքներով:

Այս պայմաններու տակ կարելի չէ անտեսել Կրեմլինի շտապողականութիւնը՝ մէկ վայրկեան առաջ վարչապետի ճգնաժամը լուծել՝ որքան շուտ այնքան լաւ, քանի ԱՄՆ-ի նոր վարչակազմը աւելի գործօն թափանցումներու չէ սկսած:

Այս պահուն գուշակութիւններ ընելու հիմքերը կը պակսին, մէկ ամիսէն աւելի ժամանակ կայ մինչեւ արտահերթ ընտրութիւնները, որուն ընթացքին դեռ շատ ջուր պիտի հոսի: Հայրենիքի ներկայով եւ ապագայով յոյժ մտահոգ հայերուն կը մնայ մատները իրարու շփել, որ նախ դուրսէն կամ ներսէն դրդուած բախումներու ուղղութեամբ չընթանան ընտրութիւնները, երկրորդ՝ ի վերջոյ յաղթէ համախոհութիւնն ու փոխ-զիջողութիւնը:

There are no comments yet.